



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 50520/08)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

20 հուլիսի 2017թ.

Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),
հանդես գալով Կոմիտեի հետեյալ կազմով՝

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal]՝ *Նախագահ,*

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Յովան Իլևսկի [Jovan Ilievski]՝ *դատավորներ,*

Եւ Ռենատա Դեգեներ [Renata Degener]՝ *Բաժանմունքի քարտուղարի
տեղակալ,*

2017 թվականի հուլիսի 11-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Գագիկ Հովհաննիսյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2008 թվականի հոկտեմբերի 9-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 50520/08) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Ա. Թամրազյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2011 թվականի հունվարի 27-ին գանգատն ուղարկվել է Կառավարություն:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1972 թվականին եւ ապրում է Երեւանում:

5. Դիմումատուն Հայաստանի «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի նախկին տեղակալն է: Ըստ դիմումատուի՝ իր հայրն ընդդիմության ակտիվիստ է:

6. 2007 թվականի սեպտեմբերի 4-ին Երեւան քաղաքի դատախազությունը որոշել է քրեական գործով վարույթ հարուցել Ռ.Կ.-ի՝ վերոնշյալ քրեակատարողական հիմնարկի դատապարտյալի կողմից ներկայացված դիմումի հիման վրա, որը հայտնել է, որ 2007 թվականի օգոստոսի 23-ին դիմումատուն եւ քրեակատարողական հիմնարկի երկու այլ ծառայողներ՝ Ա.Գ.-ն եւ Լ.Հ.-ն իրեն ծեծել են ռետինե մահակներով: Որոշման մեջ նաեւ նշվել է, որ Ռ.Կ.-ի կողմից դիմումը ներկայացնելուց հետո անցկացված դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ նա ուներ թեթեւ մարմնական վնասվածքներ:

7. 2007 թվականի սեպտեմբերի 11-ին Երեւան քաղաքի դատախազությունը որոշել է դիմումատուի նկատմամբ կիրառել խափանման միջոց՝ ստորագրություն՝ իր բնակության վայրից չհեռանալու մասին: Որպես անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոցի կիրառման հիմնավորում՝ որոշման մեջ նշվել է, որ դիմումատուն ունի մշտական բնակության վայր, չի խոչընդոտում գործի քննությունը եւ ազատության մեջ մնալու դեպքում չի թաքնվի կամ խոչընդոտի քննությունը:

8. 2007 թվականի սեպտեմբերի 18-ին դիմումատուի նկատմամբ կիրառված խափանման միջոցը վերացվել է:

9. Ինչպես պարզվում է, գործի քննության ընթացքում «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետը Ռ.Կ.-ին պատճառված մարմնական վնասվածքները հաստատող ցուցմունք է տվել, իսկ քրեակատարողական հիմնարկի բժշկական բաժանմունքի ղեկավարը նշել է, որ ինքը Ռ.Կ.-ին բժշկական օգնություն է տրամադրել եւ համապատասխան գրառում է կատարել բժշկական մատյանում:

10. 2008 թվականի փետրվարի 7-ին դիմումատուն ձերբակալվել է՝ բռնությամբ զուգորդված՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու մեջ կասկածվելու պատճառով:

11. 2008 թվականի փետրվարի 10-ին դիմումատուի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել՝ բռնությամբ զուգորդված՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու հետ կապված, ինչպես նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

12. Նույն օրը քննիչ Մ.-ն դիմել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների [ընդհանուր իրավասության] դատարան՝ դիմումատուի նկատմամբ նախնական կալանք նշանակելու պահանջով: Որպես այս խափանման միջոցի հիմնավորում՝ քննիչը նշել է, որ եթե դիմումատուն մնա ազատության մեջ, նա կարող է թաքնվել եւ խոչընդոտել գործի լրիվ եւ օբյեկտիվ քննությունը՝ վկաների վրա ազդեցություն գործադրելու միջոցով: Նա անդրադարձել է վերագրվող հանցանքի բնույթին եւ ծանրությանը, որի համար նշանակվում է մեկ տարին գերազանցող ժամկետով ազատազրկում:

13. Նույն օրը Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը բավարարել է միջնորդությունն այն հիմքով, որ վերագրվող հանցանքը ծանր է, եւ եթե դիմումատուն մնա ազատության մեջ,

կարող է թաքնվել, խոչընդոտել գործի քննությունը եւ վկաների վրա ազդեցություն գործադրել: Այսպիսով, դատարանը թույլատրել է դիմումատուի՝ երկու ամիս ժամկետով կալանավորումը՝ վերջինիս ձերբակալման օրվանից սկսած:

14. 2008 թվականի փետրվարի 14-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել Վարչական շրջանի դատարանի որոշման դեմ: Մասնավորապես, նա պահանջել է իրեն գրավով ազատ արձակել՝ հաշվի առնելով իր բարի համբավը, այն փաստը, որ ինքը նախկինում չի դատվել եւ ունի անչափահաս երեխա:

15. 2008 թվականի փետրվարի 28-ին Վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը՝ գտնելով, որ այն իրավասու չէ կալանքը գրավով փոխարինելու մասին որոշում կայացնելու, քանի որ այդ հարցը չի բարձրացվել Վարչական շրջանի դատարանում:

16. 2008 թվականի մարտի 28-ին քննիչ Մ.-ն կրկին դիմել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան՝ դիմումատուի կալանքի ժամկետը երկարացնելու պահանջով: Որպես միջնորդության հիմնավորում՝ քննիչն անդրադարձել է վերագրվող հանցանքի բնույթին եւ ծանրությանը եւ ասել, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ազատ արձակվելու դեպքում դիմումատուն կարող է թաքնվել կամ խոչընդոտել գործի քննությունը:

17. 2008 թվականի ապրիլի 4-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը բավարարել է միջնորդությունը եւ երկարացրել է դիմումատուի կալանքի ժամկետը՝ մինչեւ 2008 թվականի հուլիսի 7-ը: Ընդ որում, Վարչական շրջանի դատարանը մատնանշել է միջնորդության մեջ ներկայացված նույն հիմնավորումները:

18. 2008 թվականի ապրիլի 9-ին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել Վարչական շրջանի դատարանի որոշման դեմ՝ գրավով ազատ արձակելու պահանջով:

19. 2008 թվականի ապրիլի 17-ին Վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի բողոքը:

20. Ըստ դիմումատուի՝ 2008 թվականի մայիսի 26-ին նույն մեղադրանքը, որն առաջադրվել էր իր նկատմամբ, առաջադրվել է նաեւ Ա.Գ.-ի եւ Լ.Հ.-ի նկատմամբ, իսկ որպես խափանման միջոց նրանց նկատմամբ կիրառվել է ստորագրություն՝ բնակության վայրից չհեռանալու մասին:

21. 2008 թվականի մայիսի 30-ին գործի քննությունը պաշտոնապես ավարտվել է, եւ գործն ուղարկվել է Երեւանի քրեական դատարան:

22. 2008 թվականի հունիսի 12-ին Երեւանի քրեական դատարանը որոշում է կայացրել գործը վարույթ ընդունելու մասին: Որոշման մեջ նշվել է, որ դիմումատուի նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոխելու անհրաժեշտություն չկա:

23. 2008 թվականի նոյեմբերի 24-ին կայացած դատական նիստի ժամանակ դիմումատուն դիմել է Երեւանի քրեական դատարան՝ խափանման միջոցը փոխելու պահանջով: Նա պնդել է, որ հիմքեր չկան ենթադրելու, որ ինքը կթաքնվի, կխոչընդոտի գործի քննությունը դատավարության ընթացքում կամ կանչվելու դեպքում չի ներկայանա առաջին ատյանի դատարան: Այս առումով նա անդրադարձել է այն փաստին, որ ինքն իր ձերբակալությանը կամ կալանավորմանը նախորդող ժամանակահատվածում չի թաքնվել կամ որեւէ կերպ չի փորձել խոչընդոտել արդարադատության իրականացումը՝ չնայած այն հանգամանքին, որ քննությունն իր ձերբակալությունից մի քանի ամիս առաջ արդեն իսկ ընթանում էր: Դիմումատուն այնուհետեւ պնդել է, որ ինքն ունի բարի համբավ, ընտանիք եւ անչափահաս երեխա, ինչպես նաեւ մշտական բնակության վայր:

24. Նույն օրը գործը քննող դատավորը որոշել է մերժել միջնորդությունը՝ գտնելով, որ քրեական գործով բավարար ապացույց կա, որը չի բացառում դիմումատուի մասնակցությունը ծանր հանցագործություն կատարելու մեջ:

25. 2009 թվականի հունվարի 12-ին Երեւանի քրեական դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել եւ դատապարտել երկու տարի ժամկետով ազատազրկման:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Քրեական դատավարության օրենսգիրք

26. Քրեական դատավարության օրենսգրքի՝ նախնական կալանք եւ այլ խափանման միջոցներ կիրառելու վերաբերյալ համապատասխան դրույթները շարադրված են Դատարանի՝ Արա Հարությունյանի վերաբերյալ գործով վճռում (տե՛ս *Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի [Ara Harutyunyan v. Armenia]*, թիվ 629/11, §§ 30-37, 2016 թվականի հոկտեմբերի 20):

Բ. Քրեական օրենսգիրք (ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին)

27. Քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտոնատար անձի կողմից դիտավորությամբ այնպիսի գործողություններ կատարելը, որոնք ակնհայտորեն դուրս են եկել նրա լիազորությունների շրջանակից եւ էական վնաս են պատճառել անձանց եւ զուգորդվել են բռնություն գործադրելով, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

28. Դիմումատուն բողոքել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն [պնդելով], որ իր կալանքի ժամկետը գերազանցել է ողջամիտ

ժամկետը եւ եղել է չհիմնավորված: Նա պնդել է, որ ներպետական դատարանները չեն ներկայացրել «հիմնավոր» եւ «բավարար» պատճառներ՝ իր կալանավորման համար, եւ որ իր կալանավորման ու հետապնդման իրական պատճառն իր հոր՝ ընդդիմության ակտիվիստ լինելն էր:

29. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչեւ դատաքննության ավարտը ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

30. Կառավարությունը վիճարկել է դիմումատուի փաստարկը:

Ա. Ընդունելիությունը

31. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

32. Դիմումատուն պնդել է, որ նախնական քննության փուլը տեւել է մոտավորապես ինն ամիս, իսկ քրեական գործով վարույթը՝ մոտավորապես յոթ ամիս: Այդ ինն ամիսների ընթացքում քննիչի կողմից միայն հինգ անձ է հարցաքննվել եւ կազմակերպվել է մեկ առերեսում: Դիմումատուն չի թաքնվել քննություն իրականացնող մարմիններից, եւ չկա որեւէ ապացույց առ այն, որ նա

երբեւէ մոտեցել է վկաներից որեւէ մեկին կամ փորձել է ճնշում գործադրել նրանց վրա: Եթե դիմումատուն թաքնվելու մտադրություն ունենար, նա կարող էր դա անել 2007 թվականի սեպտեմբերի 4-ից անմիջապես հետո, երբ քրեական գործով վարույթ էր հարուցվել: Նախնական քննությունը եւ քրեական գործով վարույթն անհիմն երկարաձգվել են քննիչի սուբյեկտիվ մոտեցման պատճառով:

33. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի կալանքով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված «ողջամիտ ժամկետը» չի խախտվել, եւ որ ներպետական դատարանները ներկայացրել են «հիմնավոր» եւ «բավարար» պատճառներ դրա համար: Վարչական շրջանի դատարանի՝ դիմումատուին կալանավորելու եւ վերջինիս կալանքի ժամկետը երկարացնելու մասին որոշումը հիմնվել է այն փաստի վրա, որ դիմումատուի թաքնվելու, գործի քննությունը խոչընդոտելու եւ վկաների վրա ազդեցություն գործադրելու հետ կապված ռիսկ է եղել: Դատարանի նախադեպային իրավունքով այդ պատճառներն ընդունվել են որպես «հիմնավոր» եւ «բավարար» պատճառներ: Ավելին, քանի որ դիմումատուն «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալն է եղել, իսկ վկաները կամ այդ նույն հաստատության աշխատակիցներն էին, կամ դատապարտյալները, դիմումատուի կողմից վկաների վրա ճնշում գործադրելու ռիսկը բավականին հիմնավորված եւ իրական էր:

34. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն մինչդատական կալանքի տակ է գտնվել չորս ամսից քիչ ժամկետով, իսկ դատաքննության ժամանակ կալանավորվել է յոթ ամիս ժամկետով, որը եղել է ներպետական օրենսդրությամբ սահմանված ժամկետի շրջանակներում եւ համապատասխանել է Կոնվենցիայի պահանջներին: Դիմումատուի եւ՝ նախնական կալանքը, եւ՝ դրա ժամկետի երկարացումը հիմնավորվել են այն փաստով, որ գործով անհրաժեշտ էր ձեռնարկել մի շարք քննչական միջոցառումներ: Նախնական քննությունն ավարտվել է անմիջապես այն բանից հետո, երբ ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցառումները եւ բացահայտվել են բոլոր համապատասխան փաստերը: Եղել են ընդհանուր թվով երեք մեղադրյալներ, որոնք բոլորը

հրաժարվել են գրավոր ցուցմունքներ տալուց, իրենց առաջադրված մեղադրանքների վերաբերյալ որեւէ հարցի պատասխանելուց եւ քննությանը մասնակցելուց: Դա ազդեցություն է ունեցել քննության տեւողության վրա: Ավելին, քրեական գործով վարույթի ընթացքում գործը հետաձգվել է տասնինն անգամ, որից ութը՝ դիմումատուի կամ վերջինիս պաշտպանի պահանջով: Գործի քննության փուլում իշխանությունները գործել են պատշաճ ջանասիրությամբ եւ ժամանակին, եւ ուստի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում չի եղել:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքները

35. Դատարանը կրկին նշում է, որ, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան իր հաստատված նախադեպային իրավունքի համաձայն, հիմնավոր կասկածի շարունակական առկայությունն առ այն, որ ձերբակալված անձը կատարել է հանցանք, շարունակական կալանքի իրավաչափության համար *sine qua non* (պարտադիր պայման) է, սակայն որոշ ժամանակ անց այն դառնում է ոչ բավարար: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե արդյոք դատական մարմինների կողմից ներկայացված այլ հիմքերով շարունակվում է հիմնավորված լինել ազատությունից զրկելը: Այն դեպքում, երբ նման հիմքերը «հիմնավոր» են եւ «բավարար», Դատարանը պետք է նաեւ համոզվի, թե արդյոք ազգային իրավասու մարմինները վարույթն իրականացնելիս դրսեւորել են «պատշաճ ջանասիրություն» (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Լաբիթան ընդդեմ Իտալիայի* [ՄԴ] [*Labita v. Italy* [GC]], թիվ 26772/95, § 153, ՄԻԵԴ 2000-IV, եւ *Իդալովն ընդդեմ Ռուսաստանի* [ՄԴ] [*Idalov v. Russia* [GC]], թիվ 5826/03, § 140, 2012 թվականի մայիսի 22):

36. Դատարանը նաեւ վճռել է, որ կալանքի ցանկացած ժամկետի համար հիմնավորումը՝ անկախ դրա կարճ լինելու հանգամանքից, պետք է համոզիչ ձեւով ապացուցվի մարմինների կողմից: Ողջամիտ կասկածի առկայությունից բացի՝

կալանավորման համար դատական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից «հիմնավոր» եւ «բավարար» պատճառներ ներկայացնելու պահանջն արդեն իսկ կիրառվում է նախնական կալանք նշանակելու մասին առաջին որոշումը կայացնելու ժամանակ, այսինքն՝ ձերբակալելուց «անմիջապես» հետո (տե՛ս *Բուզաջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* [ՄՊ] [*Buzadji v. the Republic of Moldova*] [GC]), թիվ 23755/07, § 87 եւ § 102, 2016 թվականի հուլիսի 5): Ընդ որում, անձին ազատ արձակելու կամ կալանավորելու մասին որոշում կայացնելիս մարմինները պարտավոր են դիտարկել այլընտրանքային միջոցներ՝ դատական քննությանը նրա ներկայությունն ապահովելու համար (տե՛ս *Յաբլոնսկին ընդդեմ Լեհաստանի* [*Jablonski v. Poland*], թիվ 33492/96, § 83, 2000 թվականի դեկտեմբերի 21, եւ *Իդալովի* գործը՝ վերելում հիշատակված, § 140):

37. Դատարանի նախադեպային իրավունքում «հիմնավոր» եւ «բավարար» պատճառներ համարվող հիմնավորումները ներառել են այնպիսի հիմքեր, ինչպիսիք են թաքնվելու վտանգը, վկաների վրա ներգործելու նպատակով ճնշում գործադրելու կամ ապացույցները կեղծելու ռիսկը, նախնական համաձայնության գալու ռիսկը, կրկին հանցագործություն կատարելու ռիսկը, հասարակական կարգը խախտելու ռիսկը եւ կալանավորված անձին պաշտպանելու անհրաժեշտությունը (տե՛ս, օրինակ, *Շթոգմյուլլերն ընդդեմ Ավստրիայի* [*Stögmüller v. Austria*], 1969 թվականի նոյեմբերի 10, § 15, շարք Ա թիվ 9, *Վեմհոֆֆն ընդդեմ Գերմանիայի* [*Wemhoff v. Germany*], 1968 թվականի հունիսի 27, § 14, շարք Ա թիվ 7, *Թոմազին ընդդեմ Ֆրանսիայի* [*Tomasi v. France*], 1992 թվականի օգոստոսի 27, § 95, շարք Ա թիվ 241 Ա, *Թոթն ընդդեմ Ավստրիայի* [*Toth v. Austria*], 1991 թվականի դեկտեմբերի 12, § 70, շարք Ա թիվ 224, *Լեթելիերն ընդդեմ Ֆրանսիայի* [*Letellier v. France*], 1991 թվականի հունիսի 26, § 51, շարք Ա թիվ 207, եւ *Ի.Ա.-ն ընդդեմ Ֆրանսիայի* [*I.A. v. France*], 1998 թվականի սեպտեմբերի 23, § 108, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ* 1998 VII):

38. Կանխավարկածը միշտ պետք է գործի՝ հոգուտ ազատ արձակման: Ազգային դատական մարմինները պետք է, հաշվի առնելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, ուսումնասիրեն հանրային շահի վերոնշյալ պահանջի առկայությանը հակասող կամ այն հաստատող կամ 5-րդ հոդվածի կանոնից շեղումը հիմնավորող բոլոր փաստերը եւ պետք է դրանք նշեն ազատ արձակման դիմումների մասով իրենց որոշումներում: Հիմնականում այդ որոշումներում ներկայացված պատճառների եւ դիմումատուի կողմից իր բողոքներում լավ հիմնավորված փաստերի շնորհիվ է, որ Դատարանին կոչ է արվել որոշելու այն հարցը, թե արդյոք տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, թե՛ ոչ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Բուլաջիի* գործը՝ վերելում հիշատակված, § 89 եւ § 91): Ազատ արձակելուն կողմ եւ դեմ փաստարկները չպետք է լինեն ընդհանուր եւ վերացական (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Սմիրնովան ընդդեմ Ռուսաստանի [Smirnova v. Russia]*, թիվ 46133/99 եւ 48183/99, § 63, ՄԻԵԴ 2003 IX (քաղվածքներ), *Բեկչիեն ընդդեմ Մոլդովայի [Becciev v. Moldova]*, թիվ 9190/03, § 56, 2005 թվականի հոկտեմբերի 4, *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի [Piruzyan v. Armenia]*, թիվ 33376/07, § 92, 2012 թվականի հունիսի 26, *Ջայիդովն ընդդեմ Ադրբեջանի [Zayidov v. Azerbaijan]*, թիվ 11948/08, § 57, 2014 թվականի փետրվարի 20, եւ *Մերչեպն ընդդեմ Խորվաթիայի [Merčep v. Croatia]*, թիվ 12301/12, § 79, 2016 թվականի ապրիլի 26):

39. Մեղադրյալի թաքնվելու վտանգը չի կարող գնահատվել միայն նրան սպառնացող պատժի խստությամբ: Այն պետք է գնահատել՝ վկայակոչելով մի շարք այլ վերաբերելի գործոններ, որոնք կարող են կամ հաստատել թաքնվելու վտանգի առկայությունը կամ կարող են այն այնքան չնչին դարձնել, որ դրանով չի կարող հիմնավորվել մինչեւ դատական քննության ավարտը կիրառված կալանքը (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Լեթելլիերի* գործը՝ վերելում հիշատակված, § 43, *Բեկչիեի* գործը՝ վերելում հիշատակված, § 58, *Փիրուզյանի* գործը՝ վերելում հիշատակված, § 95, եւ *Ջայիդովի* գործը՝ վերելում

հիշատակված, § 59): Պետք է հաշվի առնել ներգրավված անձի բնութագիրը, նրա բարոյական սկզբունքները, տունը, զբաղվածությունը, գույքը, ընտանեկան կապերը եւ ցանկացած կապ այն երկրի հետ, որտեղ նա հետապնդվում է, ինչպես նաեւ անձի միջազգային կապերը (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Նոյմայսթերն ընդդեմ Ավստրիայի* [*Neumeister v. Austria*], 1968 թվականի հունիսի 27, § 10, շարք Ա թիվ 8, եւ *Քուզաջիի* գործը՝ վերելում հիշատակված, § 90):

40. Ավելին, վարույթի պատշաճ իրականացումը մեղադրյալի կողմից խոչընդոտելու վտանգը չի կարող որպես հիմք ընդունվել *in abstracto* (վերացական ձեւով), այն պետք է հիմնավորվի փաստացի ապացույցներով (տե՛ս *Տրզասկան ընդդեմ Լեհաստանի* [*Trzaska v. Poland*], թիվ 25982/94, § 65, 2000 թվականի հուլիսի 11, *Բեկչիեւի* գործը՝ վերելում հիշատակված, § 59, *Փիրուլյանի* գործը՝ վերելում հիշատակված, § 96, եւ *Մերչեպի* գործը՝ վերելում հիշատակված, § 89):

բ) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործով

41. Դիմումատուն սույն գործով պնդել է, *inter alia* (ի թիվս այլնի), որ դատարանները նրա նկատմամբ կալանք նշանակելու եւ դրա ժամկետը երկարացնելու մասին իրենց որոշումների համար չեն ներկայացրել «հիմնավոր» եւ «բավարար» պատճառներ՝ խախտելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը: Դատարանն ի սկզբանե նշում է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանվում են խափանման միջոցի, այդ թվում՝ կալանքի նշանակումը հիմնավորող հիմքերը: Դրանք կարծես համընկնում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքում սահմանված հիմքերի հետ: Ընդ որում, Քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածով պահանջվում է, որ կալանք նշանակելու մասին որոշումը լինի պատճառաբանված եւ պարունակի կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում:

42. 2008 թվականի փետրվարի 10-ին դիմումատուն բերվել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան, որը քննել եւ բավարարել է քննիչի՝ նրան կալանավորելու մասին միջնորդությունը: Այսպես վարվելով՝ Վարչական շրջանի դատարանը, ողջամիտ կասկածի առկայությունից բացի, որպես նրա կալանավորումը հիմնավորող հիմք է համարել դիմումատուի՝ թաքնվելու ու տուժողի եւ (կամ) վկաների վրա ազդեցություն գործադրելու միջոցով քննությունը խոչընդոտելու ռիսկը:

43. Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ Վարչական շրջանի դատարանը բավարարվել է իր որոշման մեջ վերացական եւ կարծրատիպային ձեւով այդ հիմքերը նշելով՝ չներկայացնելով որեւէ պատճառ, այդ թվում՝ փաստ կամ ապացույց առ այն, թե ինչու է այն համարում այդ հիմքերը հիմնավորված դիմումատուի գործով, եւ իր պատճառաբանությունը պարզապես սահմանափակելով Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համապատասխան մասերի հիշատակմամբ (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը): Չի ներկայացվել որեւէ բացատրություն այն հարցի վերաբերյալ, թե ինչու է դատարանը քննիչի միջնորդությունը հիմնավորված համարել, եւ ինչու է դա անհրաժեշտ եղել՝ չնայած այն հանգամանքին, որ անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոցը, մասնավորապես՝ իր բնակության վայրից չհեռանալու մասին ստորագրությունն արդեն կիրառվել էր դիմումատուի նկատմամբ մշտական բնակության վայր ունենալու, քննությունը չխոչընդոտելու հիմքով եւ այն հիմքով, որ ազատության մեջ մնալու դեպքում նա չէր թաքնվի կամ խոչընդոտի քննությունը: Նույնիսկ խափանման այդ միջոցը վերացվել է մի քանի օր հետո (տե՛ս վերելում՝ 7-8-րդ պարբերությունները): Վարչական շրջանի դատարանը հաշվի չի առել այնպիսի կարեւոր գործոններ, ինչպիսիք են քննության ընթացքում դիմումատուի վարքագիծը եւ անձնական բնույթի հանգամանքները, ինչպես նաեւ ցանկացած այլ վերաբերելի գործոն: Այն նաեւ չի ուսումնասիրել դիմումատուի կողմից արված որեւէ առարկություն կամ չի դիտարկել նրան գրավով ազատ արձակելու հնարավորությունը:

44. Դատարանը նշում է, որ դիմումատուի բողոքները եւ ազատ արձակելու վերաբերյալ միջնորդությունները, ինչպես նաեւ քննիչի հետագա միջնորդությունը՝ դիմումատուի կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ, դատարանների կողմից քննվել են միեւնույն ձեւով (տե՛ս վերելում՝ 15-րդ, 17-րդ, 19-րդ եւ 24-րդ պարբերությունները): Դատարանը հաճախ հայտնաբերել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում, երբ ներպետական դատարանները երկարացրել են դիմումատուի կալանքի ժամկետը՝ հիմնականում հիմնվելով մեղադրանքի ծանրության վրա եւ օգտագործելով կարծրատիպային ձեւակերպումներ՝ չանդրադառնալով առանձին փաստերի կամ չդիտարկելով այլընտրանքային խափանման միջոցներ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Սմիրնովայի* գործը՝ վերելում հիշատակված, § 70, *Վասիլկոսկին եւ այլք ընդդեմ «Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության»* [*Vasilkoski and Others v. “the former Yugoslav Republic of Macedonia”*], թիվ 28169/08, § 64, 2010 թվականի հոկտեմբերի 28, եւ *Տրետյակովն ընդդեմ Ուկրաինայի* [*Tretyakov v. Ukraine*], թիվ 16698/05, § 59, 2011 թվականի սեպտեմբերի 29):

45. Դատարանը նշում է, որ տասնմեկ ամիս կալանքի տակ գտնվելուց հետո դիմումատուն դատապարտվել է եւ նրա նկատմամբ նշանակվել է 2 տարի ազատազրկման ձեւով պատիժ (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը): Նշված ժամանակահատվածում չի ներկայացվել որեւէ հիմնավորում այն մասին, թե ինչու հնարավոր չի եղել նրան ազատ արձակել նախնական քննության կամ դատական քննության ընթացքում:

46. Վերջապես Դատարանը նշում է, որ կալանք նշանակելիս եւ դրա ժամկետը երկարացնելիս կարծրատիպային ձեւակերպումների օգտագործումը հաճախ հանդիպող խնդիր է Հայաստանում, եւ արդեն մի շարք գործերով հայտնաբերվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում (տե՛ս *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի* [*Piruzyan v. Armenia*], թիվ 33376/07, §§ 97-100, 2012 թվականի հունիսի 26, *Մալխասյանն ընդդեմ Հայաստանի* [*Malkhasyan v. Armenia*], թիվ 6729/07, §§ 74-77, 2012 թվականի հունիսի 26, *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* [*Sefilyan v. Armenia*], թիվ 22491/08, §§ 88-93,

2012 թվականի հոկտեմբերի 2), եւ *Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի՝ վերելում հիշատակված*, §§ 54-62) :

47. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը համարում է, որ ներպետական դատարանները, ողջամիտ կասկածի առկայությունից բացի, չեն ներկայացրել հիմնավոր եւ բավարար պատճառներ՝ դիմումատուի նկատմամբ կալանք նշանակելու եւ դրա ժամկետը երկարացնելու մասին իրենց որոշումների համար:

48. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

II. ԳԱՆԳԱՏԻ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ

49. Դիմումատուն նաեւ բողոքել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն այն մասին, որ ինքը կալանավորվել է հանցանք կատարելու մեջ որեւէ հիմնավոր կասկածի բացակայությամբ:

50. Հաշվի առնելով իր տրամադրության տակ ունեցած նյութերը եւ վերոնշյալ եզրահանգումները (տե՛ս վերելում՝ 42-րդ պարբերությունը)՝ Դատարանը գտնում է, որ բողոքարկվող փաստերով դիմումատուի՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտման որեւէ հատկանիշ չի բացահայտվում: Հետեւաբար գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է եւ պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի եւ 4-րդ կետի:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

51. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

52. Դիմումատուն պահանջել է 1 648 915 ՀՀ դրամ՝ որպես նյութական վնասի հատուցում, եւ 70 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

53. Կառավարությունը համարել է, որ նյութական վնասի եւ ոչ նյութական վնասի մասով պահանջները պետք է մերժվեն, քանի որ ենթադրյալ խախտման եւ կրած վնասի միջեւ որեւէ պատճառահետեւանքային կապ չկա:

54. Դատարանը որեւէ պատճառահետեւանքային կապ չի տեսնում հայտնաբերված խախտման եւ ենթադրյալ նյութական վնասի միջեւ. ուստի այն մերժում է այս պահանջը: Մյուս կողմից՝ Դատարանը համարում է, որ հայտնաբերված խախտման հետեւանքով դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս: Հետեւաբար այն դիմումատուին շնորհում է 3 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

55. Դիմումատուն նաեւ պահանջել է 3 000 000 ՀՀ դրամ՝ որպես հատուցում Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար:

56. Կառավարությունը գտել է, որ ծախսերի եւ ծախքերի մասով պահանջը պետք է մերժվի, քանի որ, դիմումատուի եւ վերջինիս պաշտպանի միջեւ կնքված պայմանագրի պայմանների համաձայն, դիմումատուի կողմից որեւէ ծախսի

համար դեռևս վճարում չի կատարվել: Դիմումատուի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել այն մասին, որ ինքը կրել է վերոնշյալ ծախսերը:

57. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ իր նախադեպային իրավունքը՝ Դատարանը մերժում է դիմումատուի՝ ծախսերի եւ ծախքերի մասով պահանջը՝ հաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

58. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի մասով բողոքն ընդունելի, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի,

2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում,

3. Վճռում է, որ՝

ա) պատասխանող Պետությունը երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի 3 000 եվրո (երեք հազար եվրո) ոչ նյութական վնասի դիմաց՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ, որը պետք է փոխարկվի պատասխանող Պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարի նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

4. Մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2017 թվականի հուլիսի 20-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Ռենատա Դեգեներ
Քարտուղարի տեղակալ

Ալեշ Պեյխալ
Նախագահ